ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 167-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՀԱՐ ԽԱՉԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետի, Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 27-ի թիվ 2-Ն որոշման 2-րդ կետի, հավելվածի 1.3-րդ կետի պահանջները և քաղաքացու դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

Քաղաքացի Գոհար Խաչիկի Ստեփանյանին տալ քանդման թույլտվություն՝ Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 4-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Գ. Ստեփանյանին պատկանող 92.96 քառ. մ. մակերեսով պահեստի, 19.44 քառ. մ. մակերեսով պահեստի, 33.6 քառ. մ. մակերեսով կաթսայատան և 59.8 քառ. մ. չորանոցի քանդման աշխատանքներն իրականացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 11
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 168

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 0.22285 հա և 0.40107 հա մակերեսներով արոտավայրերը, 1.71774 հա, 1.02195 հա, 0.65108 հա և 0.29659 հա մակերեսներով այլ հողատեսքերը գրանցել որպես առանձին միավորներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2020թ. օգոստոսի 13
Գլաձոր համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 169-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ՝ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱՍՏՂԻԿ ՌՈՒԲԵՆԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՄՈ ԵՂԻՇԵԻ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի նախկին բնակիչ՝ հանգուցյալ Աստղիկ Ռուբենի Թորոսյանին /մահացած՝ 2009թ./ և նրա ընտանիքի անդամ՝ Կամո Եղիշեի Ավետյանին /ծնված՝ 1970թ./ համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի փողոց 19, փակուղի 8, թիվ 13 հասցեում գրանցված բնակելի տունը և բնակելի կառուցապատման հողամասը /կադաստրային ծածկագիր 10-014-0044-0022/ վերահասցեավորել Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի փողոց 18 թիվ 14 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

2020թ. օգոստոսի 13
Գլաձոր համայնք